Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԱՂՕԹՔՆ Ի ԴԵՄՍ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ

Ամենակալ անարատ Աստված՝ անսկիզբ Հայր՝ անտեսանելի, անբռնավանդակելի, անպատմելի, անպարագրելի, անփոխարինելի, անիմանալի, անհասանելի:

Որ միայն Դու՝ անմատչելի լույսի մեջ բնակվածդ, անմահություն ունես:

Որ Քո խոսքով ստեղծեցիր երկինքն ու երկիրը, ծովն ու ցամաքը և դրանց մեջ եղած բոլոր արարածներին, և Քո Հոգով գոյացան բոլոր ստեղծվածները:

Եվ մարդկային ազգի նկատմամբ Քո անչափելի սիրո պատճառով ուղարկեցիր Քո Միածին Որդուն՝ փրկելու մեզ Ադամի անեծքից:

Նա, որ երկնքից իջնելով, Սուրբ Հոգով մարմնացավ սուրբ և անարատ կույս Մարիամից, և մարդկային բոլոր կիրքերը կրելով, բացի մեղքից, ազատեց մեզ մեղքի բեռից:

Եվ մեզ համար խաչի ու մահվան համբերելով, մեզ փրկեց սատանայի ծառայությունից և կուռքերի երկրպագությունից:

Եվ մեզ սովորեցրեց ամենասուրբ Երրորդությանդ գլուխ և ծունր խոնարհել, աղոթք մատուցել և մեղքերի թողություն խնդրել:

Եվ հարությունից հետո զանազան նշաններով քառասուն օր երևաց Իր աշակերտներին՝ նրանց հետ հացով հաղորդվելով՝ կենսաբեր տնօրինության հավատքի հաստատության համար:

Եվ Իր հարության քառասուներորդ օրը երկինք վերանալիս, ձեռքը դրեց աշակերտների վրա և օրհնեց՝ նրանց տալով առաքինության կատարյալ շնորհները:

Եվ նրանց միտքը բացեց՝ հասկանալու գրքերը. և նրանց պատվիրեց մնալ Երուսաղեմում, սպասել աստվածային խոստմանը և երկնավոր ու մարդասեր Հոր ավետիսին:

Դու, Տեր, Քո անսահման ողորմության շնորհները պարգևեցիր մարդկային ազգին:

Ուղարկեցիր Քո էակից ու փառակից Սուրբ Հոգուն մեծ կիրակի օրը՝ Փրկչի զարության հիսուներորդ օրվա լրանալուց՝ երրորդ ժամին, երբ նախահայր Ադամը Սուրբ Հոգովդ գոյացավ որպես կենդանի հոգի՝ աստվածային փչմամբ, ապա պտղի ճաշակումով կորստյան մատնվելով և մահա-

ևալով, այս ժամին վերստին է կենդանաստեղծվում՝ Սուրբ Հոգուդ իջմամբ առաքյալների դասի մեջ:

Որը հրեղեն լեզուներով երևալով, ևստեց ևրանց վրա և լցրեց ևրանց ամենաուատ շնորհով՝ խոսելու բոլոր լեզուներով և լսողների մոտ միաձայն ապաւավորելով Սուրբ Հոգուդ, որով և որպես առաջին ծնունդ ծնելով երեք հազարին՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, ևրանք առաջինը երկրր պագեցին սուրբ Երրորդությանդ:

Որոնց հետ և մենք այսօր խոնարհեցնում ենք մեր ծնկներն ու պարանոցները և աղաչում ենք Քո առաքյալների հետ. ընդունիր վերջիններիս հետ մեր և ևրանց երկրպագությունը, ովքեր նույն արժանավորությամբ խորհրդաբար երկրպագել են Քեզ մինչև այժմ:

Լսիր մեզ մեծ Պենտեկոստեի այս օրը, երբ Սուրբ Հոգիդ ուղարկեցիր ստորինների մեջ՝ Քո որդի Հիսուսի երկինք համբարձվելուց հետո, և երբ հավատով դիմում ենք Քեզ:

Քո սրբության բարձունքներից ևայիր Քո ժողովրդին, ովքեր կանգնած են Քո առջև և Քո մեծ ողորմության ակնկալություն ունեն:

Ուղարկիր այսօր բարերար Սուրբ Հոգուդ Քո տաճարի և ևրանում հավաքվածների մեջ, ինչպես այն ժամանակ ուղարկեցիր վերնատանը՝ առաքյալների մեջ:

Որովհետև այստեղ նույնպես Քո Միածին Որդին մշտապես պատարագվում է, ինչպես վերնատանը, որտեղ սուրբ խորհուրդն ավանդելով՝ աշակերտներին բաշխեց խորհրդավոր ընթրիքի ժամանակ և ևրանց ոտքերը լվաց և երևաց փակ դռներով վերնատանը՝ հարության երեկոյան առաջին կիրակի օրը, և դարձյալ՝ ութերորդ օրը:

Եվ Պենտեկոստեի օրերի ավարտին Սուրբ Հոգիդ, հողմի փչումով իջնելով, այն լցրեց հրով՝ իր մեջ սուրբ միաբանվածներով հանդերձ:

Որի համար փառավորում ենք Քեզ, բարերար Տեր, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հայրը, և աղաչում ենք Քեզ ամբողջ սրտով, քաղցրությամբ ևայիր մեզ, գթությամբ և ողորմությամբ հիշիր Քեզ ապավինածներիս, տառապածներիս ու դատապարտվածներիս, շրջիր բանսարկուի կողմից բանտված մեր ոգիների գերությունը և կանգնեցրու ընկածներիս ու կործանվածներիս:

Աղաչում ենք Քեզ, մարդասեր Տեր, որովհետև թեպետ և մեղանչեցինք, սակայն ավազանի արգանդից դեպի Քեզ դարձանք, և Դու ես մեր Աստվածը. մեզ բաց մի թող Քո ձեռքից, որովհետև ունայնության մեջ ևվազեցին մեր օրերը, մենք ևախանձեցինք թշնամիներից և մեզ ատողների համար ծաղր ու ծանակի առարկա եղանք:

Այլ հուսալով Քո ողորմությանը, որ այս օրերին եղավ, հայցում ենք Քեզանից, մեր առջև բաց արա Քո ողորմության դուռը և սրբիր մեզ մեր մեղքերի գաղտնիքներից:

Տես Քո ծառաների խոնարհությունը և թողություն տուր մեր կամա և ակամա, գիտակցաբար ու անգիտակցաբար կատարած բոլոր հանցանքներին:

Քավություն շնորհիր Քո ժողովրդին և ամենքին մաքրիր Սուրբ Հոգուդ զորությամբ:

Փրկիր մեզ թշնամու բռնությունից և մեր կյանքն ամուր պահիր բանսարկուի չարահնար որոգայթների դեմ:

Խաղաղության հրեշտակին հանձնիր մեզ, Դու որ ևախքան մեր հայցելը, պատրաստում ես մեր պետքերը:

Արժանացրու մեզ խոստովանության ու ապաշխարության դառնալ դեպի Քեզ՝ ևախքան մեր վախճանը:

Սուրբ Հոգուդ ընդունելության տաճար դարձրու բոլորին՝ սուրբ առաքյալների հետ, և մեր անունները նրանց հետ միասին գրիր կենաց գրքում:

Մեզ ամենքիս ժողովիր Քո արքայության մեջ վերին Սիոնում՝ երկնային ու բարձրագույն վերնատունը: Որովհետև Քոնն է ողորմությունը, և Քեզ և Քո Միածին Որդուն և Սուրբ Հոգուդ ենք փառք վերառաքում այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

2

Մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ Քո խաղաղությունը շնորհեցիր Քո առաքյալներին՝ փչելով նրանց վրա, և սուրբ Հոգիդ այսօր հայտնապես պարգևեցիր նրանց: Որը գալով Հորից՝ բնակվեց նրանց մեջ, նրանց տրտմությունը փարատեց և հրեղեն լեզուներով նրանց լեզուների վրա հանգչելով, նրանց բերանները բացեց՝ խոսելու բոլոր լեզուներով:

Եվ բոլոր մարդկանց, որոնք աշտարակից բաժանվել էին բազմաստված մոլորություններով, միավորեց ճշմարիտ երեքաձնյա զորությանդ մեկ աստվածագիտությամբ, սովորեցրեց բոլոր լեզուներով մեկ Աստծո փառավորել՝ ողջ տիեզերքում ավետարանի քարոզությամբ, և ծունկ խոնարհեցնել միայն նույն Աստծուն, ինչպես այսօր մկրտությամբ նոր ծնված երեք հազարը:

Որոնց հետ և մենք՝ նույն Հոգով լուսավորված, հավատով ծունկ ենք խոնարհում ամենասուրբ Երրորդությանդ առջև և աղաչում ենք՝ միաբան հավաքվածներս:

Նայիր ինձ՝ անարժանիս, որ ժողովրդի աղոթքը Քո սուրբ սեղանի առջև Քեզ եմ մատուցում:

Բաց արա, Տեր, իմ՝ մեղավորի շուրթերը, ինչպես երանելի առաքյալներինը, և լցրու մեզ Քո Սուրբ Հոգով՝ Քեզանից տրված բոլոր շնորհները հաղորդելու Քո ընտրյալներին: Եվ իմ բազում մեղքերի պատճառով մի արգելիր Քո ողորմությունը մեզանից, որ հույսով կանգնած ենք Քո առջև և Քո անբավ գթությունից ենք հայցում:

Քո ծառաներին արժանի արա աստվածային պարգևներիդ. իմաստության ու հանճարի, խորհրդի ու զորության, գիտության ու աստվածապաշտության և Քո երկյուղի հոգով լցրու մեր մտքերը, և մեր մեջ սուրբ սիրտ, ուղիղ հոգի և մաքուր միտք նորոգիր, մարդասե՛ր:

Դու, որ նավահանգիստ ես նավողների համար, Քո սուրբ Հոգով մեր ընթացքն ուղղիր անբիծ ճանապարհի մեջ՝ միշտ խորհելու Քո օրենքի վրա, պահելու Քո պատվիրանները, կատարելու Քո հրամանները և քարոզելու Քո խոսքերը: Մե աղոթքներն ու խնդրանքները բարությամբ ավարտիր:

Դու, որ մեր ախտահարված բնությունը միացրեցիր Քո անախտ աստվածությանը, և դրանով մեր կարիքներին հաղորդակից եղար և մեր ախտերը բժշկեցիր:

Լսիր մեզ, մեր փրկիչ Աստված, և խոնարհեցրու Քո ականջը դեպի Քո

սուրբ եկեղեցում հավաքվածներիս երկրպագությունը՝ սուրբ վերնատան Քո ընտրյալների նմանությամբ:

Սրբիր մեզ մեղքերի բոլոր պղծություններից և սուրբ Հոգուդ ուղարկիր միաբան հավատացյալներիս մոտ, որպեսզի բնակվի մեր մեջ, լուսավորի մեր մտքերը աստվածգիտության լույսով, առաջնորդի մեզ քո պատվիրաններն ամենայն ճշմարտությամբ պահելու և դարձնի աստվածային կտակարանների օրենսգետ, որը խոսեցին մարգարեները, առաքյալներն ու վարդապետները՝ Սուրբ Հոգու միջոցով, և որը մեզ սովորեցնելու ու զորացնելու է՝ ամեն ինչ կատարելու:

Աղաչում և պաղատում եմ Քեզ, որպեսզի հաշտությամբ նայես Քո ժողովրդին՝ ի գին Քո սուրբ արյան. իմ բազում հանցանքների պատճառով մի անտեսիր սրանց հայցվածները, որովհետև Քո փրկածներն են և դեպի Քեզ են ձեռքերը բարձրացնում ու հաշտություն խնդրում:

Արդ, ընդունիր սրանց մաղթանքների ծնրադրումն ինչպես նոր լուսավորվածներինը, և սրանց ձեռքերի համբարձումն ընդունիր որպես երեկոյան պատարագ, իսկ սրանց աղոթքները՝ որպես անուշահոտ խունկ Քո բարերար Տերության առջև, և Քո թևերի հովանու տակ ծածկիր սրանց՝ պահելով երևելի ու աներևույթ թշնամիներից:

Որպեսզի անարատ քրիստոնեությամբ ապրելով այս աշխարհում, Քո բոլոր սրբերի հետ արժանի լինենք երկնային կյանքիդ, և գոհանալով փառավորենք Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

3

Դու, որ զորությանց Տեր ես, Աստված ճշմարիտ, լույսի և կյանքի աղբյուր՝ անքննելի կերպով բխելով Հորից, հրաշագործ Սուրբ Հոգի, որը սուրբ առաքյալներին խոստացավ մեր Աստված՝ Քրիստոս, Նա, որ մահվամբ մահվան կապանքները քանդեց և մեղքերի սկզբին անլուծանելի կապանքներով արգելափակեց անշեջ հրի ու արտաքին խավարի մեջ՝ այնտեղ ամուր փակելով պիղծ վիշապին՝ իր ապստամբ զորության հետ միասին, և այնտեղ բանտարկված Ադամի որդիներին՝ ննջեցյալներին, դուրս հանեց դժոխքից՝ Իր հարությամբ:

Եվ մեր բնությամբ հանդերձ բարձրանալով Հոր մոտ, բոլոր բարիքների ավարտին ու բոլոր խորհուրդների կատարման ժամանակ Քեզ՝ նորոգող ու կենդանարար սուրբ Հոգուդ, տրտմածներին մխիթարիչ ուղարկեց:

Դու՝ Աստված, որ խոնարհվեցիր Հայր Աստծուց և եկար վերնատուն, Դու, որին երկինքը չէր կարող տանել. և անճառելի խնդությամբ ու շնորհներով լցրեցիր Քո ընտրյալներին, որոնց ուղարկեցիր ողջ աշխարհում կենաց խոսքը քարոզելու:

Որոնք ողջ տիեզերքը լցրեցին Քո գիտությամբ, Տեր, և մեկ Աստվածություն ճանաչել տվեցին ողջ աշխարհին՝ վերացնելով կուռքերի անոտի պաշտամունքը:

Սուրբ ավազանով հեթանոսներին ծնեցին որպես երկնավոր Հորդ որդեգիրների, և բոլորին ամենասուրբ Երրորդությանդ երկրպագողներ դարձրեցին:

Բոլոր վայրերում դրեցին սուրբ եկեղեցու հիմքերը և հարդարեցին Քո

փառքի սեղանը, որից անմահական խորհրդով կերակրեցին բոլոր Քեզ հավատացողներին:

Երկիրը երկինք դարձնելով՝ երկրայիններին դասակից դարձրեցին երկնայիններին:

Եվ արդ, մեր Տեր Աստված՝ ողորմած և մարդասեր, լսիր մեր պաղատանքները, որ հայցում ենք Քեզանից, և երկնային հանգստի մեջ ընդունիր մեր ննջեցյալների հոգիները, որոնք լուսավորվելով հոգևոր ծննդյամբ՝ քրիստոնյա անվան արժանացան, և հաղորդվելով աստվածային մարմնին ու արյանը, հավատով ու ուղիղ դավանությամբ հեռացան աշխարհից, որոնց և հիշատակը կատարեցինք այսօր փրկական պատարագի հույսով՝ Քո երևման մեծ օրը:

Ամենակալ Տեր, մահկանացուների ու անմահների Աստված՝ ամեն ինչի արարիչ և կյանքի ու մահվան Տեր, մարմնի խնամող, և հանդերձյալում՝ երկրի բոլոր ծագերի հույս, Դու, որ մեծ Պենտեկոստեի տոնի վերջին օրը վերնատան մեջ Քո փառավոր գալստյամբ ուրախացրիր Քո աննուն հավաքվածներին, լսիր և այժմ մեր աղաչանքի ձայնը և հիշիր նախկին ննջեցյալներին՝ մեր հայրերին ու եղբայրներին, և հանգստացրու Քո արքերի խորանում՝ լույսի վայրում:

Հիշիր նրանց աղոթքներն ու պաղատանքները և խոստովանությունը՝ կյանքի ու վախճանի ժամանակ, և թողություն շնորհիր նրանց բոլոր հանցանքներին. և բոլորին արժանացրու սպասելու ապագա բարիքի ու փառքի հատուցմանը, որը պատրաստեցիր Քո սիրելիների համար, և նաև նրանց հետ օրհնելու ամենասուրբ Երրորդությանդ:

Եվ մեզ՝ Քո անունով Քո սուրբ տաճարի մեջ հավաքվածներիս՝ Քո ամենակեցուցիչ գալստյան օրը երկրպագողներիս ու տոնողներիս, շնորհիր երկնային խաղաղություն և մեղքերի ներողությունից հոգիների ու մարմինների նորոգում՝ ապաշխարությամբ ու արտասուքներով վերստին ծնվելու, և բոլորին, սուրբ առաքյալների հետ, զորացրու զգաստությամբ ու արդարությամբ՝ Քո բնակության համար, որպեսզի մեր մեջ չարի համար տեղ և մուտք չլինի:

Հրեղեն լեզուներով սրբիր Քո ծառաների շուրթերն ու լեզուները, որպեսզի արժանի լինենք հոգևոր օրհնությամբ հոգեղենների հետ երգելու, սաղմոս ասելու և ամեն ժամ աղոթելու, սուրբ սրտով և խոնարհ հոգով բանավոր պաշտամունք մատուցելու Քեզ, և սրտի խորքից արտասվալից պաղատանքով Քեզանից քավություն խնդրելու:

Եվ մեր ողջ կյանքն ամրացրու ու Քո երկյուղով պարսպված պահիր չար խորհուրդներից, խոսքերից ու գործերից:

Եվ մեզ արժանացրու ի հաճույս Քեզ ապրելու, մեր ընթացքը Քո կամքի համաձայն ճշմարիտ խոստովանությամբ կատարելու, և ջերմեռանդ զղջումով, փրկական խորհրդի հաղորդությամբ, քահանայական մոտեցումով, նվերներով ու պատարագներով մշտապես Քո սուրբ սեղանի առջև հիշատակ կատարելու :

Ծնկի գալով Քո առջև, աղաչում ենք, մարդասեր Սուրբ Հոգի, որպեսզի նաև մեր հոգիների ընթացքը մարմնական կենցաղի մեջ պահես, որպեսզի աներկյուղ անցնենք և փրկվենք օդային ու պիղծ դևերից, և առաջնորդես դեպի ճշմարիտ երկիր՝ դեպի երանելի կյանք ու արդարների օթևան, որտեղ սրբերի հոգիներն ուրախությամբ օրհնում են Քեզ, և հաջորդ նորոգ-

ման՝ Քո էակից Փրկչի գալստյան ժամանակ, այթելացնես բոլորին՝ հրեշտակապետի փողի ձայնով ու Աստծո խոսքով:

Իսկ Դու, մեր Աստված և Տեր, Սուրբ Հոգի, երբ հարությամբ ստանաս բոլոր մարդկանց և յուրաքանչյուրին հոգով ճորոգես, փրկիր գեհենի սպառնալիքից ու աննկարելի տանջանքներից և Քո արբերի բանակին խառնիր Քո անունը սիրողների հետ՝ որպեսզի երկնքի արքայության ժառանգորդներ լինենք:

Եվ մենք՝ Քո բանավոր հոտը և Քեզ հավատացողները, օրհնելու և փառավորելու ենք ամենասուրբ Երրորդությունդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Աշխարհաբարի վերածեց՝
ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆԸ